


75 Քարտեզի վրա ո՞ր ռասայի տարածման շրջաններն են պատկերված և տառով:

- 1) նեգրոիդ
- 2) մոնղոլոիդ
- 3) եվրոպեոիդ
- 4) ավստրալոիդ



76 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ. 18° և արմ.երկ. 5°: Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը սեպտեմբերի 23-ին:

(77-78) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, գագաթին՝ 520 մմ է: Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18° է: (Հաշվարկը կատարել 5°-ով):

77 Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:

78 Որոշել օդի ջերմաստիճանը Լեռան գագաթին:

(79-80) Երկրի բնակչության թիվը 80 000, բնական աճի գործակիցը՝ 15‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1400, արտագաղթը՝ 600:

79 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

80 Որոշել երկրի բնակչության թիվը մեկ տարի անց:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:


Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չնոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ



1) Նկարում պատկերված է Երկրի դիրքը Արեգակի նկատմամբ.

- 1) մարտի 21-ին
- 2) դեկտեմբերի 22-ին
- 3) հունիսի 22-ին
- 4) սեպտեմբերի 23-ին

2) Երկու քաղաքներ գտնվում են նույն միջօրեականի վրա, նրանց միջև հեռավորությունը 50° է: Նրանց միջև իրական հռավորությունը կլինի.

- 1) 3330 կմ
- 2) 5550 կմ
- 3) 4440 կմ
- 4) 6660 կմ

3) Հասարակածի երկարությունը կազմում է.

- 1) 30076 կմ
- 2) 40076 կմ
- 3) 20067 կմ
- 4) 12000 կմ

4) Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Երկիրը Արեգակի շուրջը պտտվում է շրջանաձև ուղեծրով:
- 2) Լոնդոն քաղաքը գտնվում է երրորդ ժամային գոտում:
- 3) Երկրի միջին շառավիղը հավասար է 6371 կմ:
- 4) Հյուսիսային և հարավային բևեռներն իրար միացնող երևակայական գիծը կոչվում է հասարակած:

5) Երկրակեղևի և միջնապատյանի վերին կարծր շերտը միասին կոչվում է.

- 1) գեոսինկլինալ
- 2) պլատֆորմ
- 3) միջուկ
- 4) քարոլորտ

6) Մթնոլորտի երկրամերձ շերտում ջրային մանրագույն կաթիլների կուտակումը կոչվում է.

- 1) ամպ
- 2) ցող
- 3) եղյամ
- 4) մառախուղ


7) Այն սահմանային գիծը, որը իրարից է բաժանում հարևան գետերի ջրավազ ավազաններն, կոչվում է.

- 1) գետի անկում
- 2) ջրբաժան գիծ
- 3) գետահովիտ
- 4) գետի թեքություն

74

Կլիմայական քարտեզի վրա 4Ա, 4Բ, 4Գ թվերով պատկերված կլիմայական գոտին է.

- 1) բարեխառն
- 2) մերձհասարակածային
- 3) արևադարձային
- 4) մերձարևադարձային



- 69) Ինչն ընդհանուր է Տավուշի և Սյունիքի մարզերի համար.
- 1) Սահմանակից են Ադրբեջանին
 - 2) Զարգացած է լեռնահանքային արդյունաբերությունը
 - 3) Զարգացած է ծխախոտագործությունը
 - 4) Ուրբանիզացման մակարդակը բարձր է հանրապետության միջին ցուցանիշից

70) Ազգային պարկեր ունեցող մարզերն են.

- 1) Շիրակը և Վայոց ձորը
- 2) Արագածոտնը և Արարատը
- 3) Գեղարքունիքը և Տավուշը
- 4) Կոտայքը և Արմավիրը

71) Այլընտրանքային էներգառեսուրսների օգտագործմամբ հայտնի երկիր է.

- 1) Ուկրաինան
- 2) Չինաստանը
- 3) Իսլանդիան
- 4) Գերմանիան

72) Սնոգն առավել բնորոշ է.

- 1) Վենետիկին
- 2) Լոնդոնին
- 3) Վաշինգտոնին
- 4) Ժնևին

73) Բնական միջավայրի մոնիթորինգ է.


- 1) Բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումը, գնահատումը և վերահսկումը:
- 2) Ցամաքի տարածքի որևէ տեղամասում միջավայրի առանձին տարրերի պահպանությունը:
- 3) Բնական ռեսուրսների տնտեսական գնահատումը:
- 4) Շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտումը:

8) Գետի անկումը 2400 մ է, երկարությունը՝ 800 կմ: Գետի միջին թեքությունը կլինի.

- 1) 2 մ/կմ
- 2) 4 մ/կմ
- 3) 3 մ/կմ
- 4) 8 մ/կմ


9) Ո՞ր տառով է նշված խառնարանը.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



10) Նկարում պատկերվածը ո՞ր կլիմայական գոտուն է բնորոշ.

- 1) բարեխառն
- 2) արկտիկական
- 3) հասարակածային
- 4) մերձարևադարձային



11) Անտարկտիդայի ափերը ողողող ծովերն են.

- 1) Անունդսենի և Ռոսսի
- 2) Սպիտակ և Յյուսիսային
- 3) Կարայի և Բաֆինի
- 4) Բարենցի և Նորվեգական

12) Տափաստանների զոնային բնորոշ բուսատեսակներ են.

- 1) եղևնին և սոճին
- 2) կեչին և բոխին
- 3) կակտուսը և օշինդրը
- 4) փետրախոտը և սիզախոտը

13) Լեռնաշղթան ունի հյուսիս-հարավ ձգվածություն, եզերում է մայրցամաքը արևմուտքից: Թարգմանաբար նշանակում է «Պղնձե լեռներ»: Այդ լեռնաշղթան է.

- 1) Ալպերը
- 2) Հիմալայները
- 3) Անդերը
- 4) Ուրալյանը

- 14 **Ընտրել ճիշտ պատասխանը.**
- 1) Եվրասիայի ամենաբարձր լեռը Մոնբլանն է:
 - 2) Հարավային Ամերիկյան Անտարկտիդայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
 - 3) Աֆրիկայում մնացորդային ծագում ունեն Նյասա և Տանգանիկա լճերը:
 - 4) Ժամանակավոր հոսք ունեցող գետերը Ավստրալիայում կոչվում են քրիկներ:

- 15 **Ընտրել ճիշտ պատասխանը.**
- 1) Մշտապես արևադարձերից հասարակած փչող քամիները կոչվում են բրիզներ:
 - 2) Աֆրիկայի կլիմայի ձևավորման վրա մեծ է մուսսոնների ազդեցությունը:
 - 3) Ավստրալիան ամենախոնավ մայրցամաքն է:
 - 4) Ըստ բարձրության մթնոլորտային ճնշումը նվազում է:

- 16 **«Լիճ-մայրցամաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**
- 1) Էյր - Եվրասիա
 - 2) Չադ - Աֆրիկա
 - 3) Տիտիկակա - Ավստրալիա
 - 4) Բայկալ – Հյուսիսային Ամերիկա

- 17 **«Օոց-օվկիանոս» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**
- 1) Բենգալական – Հյուսիսային Սառուցյալ
 - 2) Գվինեական - Խաղաղ
 - 3) Մեքսիկական – Ատլանտյան
 - 4) Բիսկայան – Հնդկական

- 18 **Միջագետքի դաշտավայրով հոսող գետեր են.**
- 1) Տիգրիսը և Եփրատը
 - 2) Ամուդարյան և Սիրդարյան
 - 3) Ինդոսն ու Գանգեսը
 - 4) Լենան և Օբը

- 63 **Ընտրել միակ սխալ պատասխանը Մեծ Բրիտանիայի համար.**
- 1) Արդյունաբերության առաջատար ճյուղը մեքենաշինությունն է:
 - 2) Առևտրական նավատորմն իր ջրատարողությամբ աշխարհում առաջատարներից է:
 - 3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է :
 - 4) Բարձր է ուրբանիզացման մակարդակը:

- 64 **Ընտրել ճիշտ պատասխանը.**
- 1) Հայկական լեռնաշխարհը հարավից եզերում է Փոքր Կովկասը:
 - 2) Արագածը և Նեմրուքը գործող հրաբուխներ են:
 - 3) Ցայտուն արտահայտված է երիտասարդ հրաբխականությունը:
 - 4) Հայկական լեռնաշխարհը միջին բարձրությամբ զիջում է Իրանական և Փոքրասիական բարձրավանդակներին:

- 65 **« Լանդշաֆտային գոտի – հողային տիպ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**
- 1) լեռնատափաստանային - լեռնային սևահողեր
 - 2) անապատակիսանապատային - կարմրահողեր
 - 3) մերձալպյան և ալպյան - դարչնագույն հողեր
 - 4) լեռնաանտառային - կուլտուր-ռոտզելի հողեր

- 66 **Ընտրել մարզերի և քաղաքների անվանումների տրված համապատասխանության ճիշտ շարքը.**
- | | |
|----------------|-------------|
| 1. Լոռի | ա. Սիսիան |
| 2. Սյունիք | բ. Մարտունի |
| 3. Գեղարքունիք | գ. Ալավերդի |
| 4. Տավուշ | դ. Դիլիջան |

- 1) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
- 2) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 3) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
- 4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

- 67 **Հայաստանի թեթև արդյունաբերության զարգացմանը նպաստել է.**
- 1) աշխատանքային ռեսուրսների առկայությունը
 - 2) հողային ռեսուրսների առկայությունը
 - 3) ջրային ռեսուրսների առկայությունը
 - 4) սննդի արդյունաբերության զարգացումը

- 68 **Ընտրել ՀՀ գետերի ճիշտ շարքը՝ ըստ նրանց երկարությունների նվազման.**
- 1) Հրազդան, Ախուրյան, Ազատ, Քասախ
 - 2) Ազատ, Ախուրյան, Քասախ, Հրազդան
 - 3) Ախուրյան, Քասախ, Հրազդան, Ազատ
 - 4) Ախուրյան, Հրազդան, Քասախ, Ազատ

57 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Շարժման սեփական միջոցներ ունեցող ջրային կենդանիները կոչվում են պլանկտոն:
- 2) Տեղատվությունը օվկիանոսի ջրի մակարդակի բարձրացման երևույթն է:
- 3) Ջրակայուն առաջին շերտի վրա տեղադրված ստորերկրյա ջրերը կոչվում են արտեզյան:
- 4) Օվկիանոսների հատակի մինչև 200 մ խորությունները կոչվում են մայրցամաքային ծանծաղուտ:

58 Ընտրել ճիշտ պատասխանը.


- 1) Ցիկլոնը մթնոլորտային ցածր ճնշման մարզ է:
- 2) Ներքնոլորտում ըստ բարձրության օդի ջերմաստիճանը բարձրանում է:
- 3) Մթնոլորտային նորմալ ճնշումը հավասար է սնդիկի սյան 670 մմ:
- 4) Ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը մեծ է հասարակածային շրջաններում:

59 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Մեքենաշինության գիտատար ճյուղերը տեղաբաշխվում են մետալուրգիական բազաների մոտ:
- 2) Ծանր գունավոր մետաղների ձուլման ձեռնարկությունները տեղաբաշխվում են հումքային բազաների մոտ:
- 3) Մեքենաշինության մետաղատար ճյուղերը տեղաբաշխվում են գիտական կենտրոնների մոտ:
- 4) Արդյունաբերության բնորոշ է գծային տեղաբաշխումը:

60 Մեռատարիքային բուրգը բնորոշ է.

- 1) Մեծ Բրիտանիային
- 2) Նիգերիային
- 3) Ճապոնիային
- 4) Ռուսաստանին



61 Այդ պետությունը պետական կառավարման ձևով խորհրդարանական հանրապետություն է: Քրոնի պաշարներով աշխարհի առաջատար երկրներից է: Մայրաքաղաքը բնակչության թվով երկրորդ քաղաքն է: Այդ պետությունն է.

- 1) Ֆրանսիան
- 2) Թուրքիան
- 3) Գերմանիան
- 4) Իտալիան

62 Ընտրել ճիշտ պատասխանը.


- 1) Ավստրալիան և Ռուսաստանը խտաբնակ երկրներ են:
- 2) Հինդուիզմը և բուդդիզմը ազգային կրոններ են:
- 3) Զարգացող երկրներում բարձր է ուրբանիզացման աճի տեմպերը:
- 4) Մեգալոպոլիսները և ագլոմերացիաները բնակավայրերի պարզ ձևեր են:

19 Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Նեղոս գետը.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

20 Քարտեզի վրա Ալժիր պետությունը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը




- 21 Բնակչության թվի կտրուկ աճը՝ ծնելիության բարձր մակարդակի պահպանման և մահացության էական կրճատման հետևանքով կոչվում է.
- 1) ժողովրդագրական քաղաքականություն
 - 2) բնակչության վերարտադրություն
 - 3) ժողովրդագրական պայթյուն
 - 4) ժողովրդագրական ճգնաժամ
- 22 Ընհանուր ծագմամբ, ժառանգաբար փոխանցվող արտաքին ֆիզիկական և մարդաբանական հատկանիշներով իրար նման մարդկանց պատմականորեն ձևավորված խումբը կոչվում է.
- 1) ռասա
 - 2) աշխատանքային ռեսուրսներ
 - 3) էթնոս
 - 4) ազգ
- 23 Դա արդյունաբերության ճյուղերից է, աշխատատար է և գիտատար, որի պատճառով տեղաբաշխված է խոշոր քաղաքներում: Այդ ճյուղն է .
- 1) վառելիքային արդյունաբերություն
 - 2) սննդի արդյունաբերություն
 - 3) մեքենաշինություն
 - 4) մետաղաձուլություն
- 24 Երկրի տրանսպորտային ուղիների երկարությունը 120000կմ է, երկրի մակերեսը՝ 80000կմ²: Տրանսպորտային ցանցի խտությունը կլիմի.
- 1) 1.5կմ/կմ²
 - 2) 4 կմ/կմ²
 - 3) 0.5 կմ/կմ²
 - 4) 2.5 կմ/կմ²
- 25 «Ժողովուրդ-կրոն» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.
- 1) ֆրանսիացիներ-քրիստոնեություն
 - 2) հրեաներ- հուդայականություն
 - 3) արաբներ - մահմեդականություն
 - 4) թուրքեր- բուդայականություն
- 26 «Պետություն – կառավարման ձև» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.
- 1) Սաուդյան Արաբիա - հանրապետություն
 - 2) Իտալիա - միապետություն
 - 3) Ֆրանսիա - հանրապետություն
 - 4) Հնդկաստան – միապետություն
- 27 «Պետություն - բուսաբուծության մասնագիտացման ճյուղ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.
- 1) Բրազիլիա - սուրճ
 - 2) Մեծ Բրիտանիա - բամբակենի
 - 3) ԱՄՆ - եգիպտացորեն
 - 4) Չինաստան – բրինձ

- 51 Ընտրել ճիշտ պատասխանը.
- 1) Հայաստանի Հանրապետությունը գտնվում է հինգերորդ ժամային գոտում:
 - 2) Արեգակի ամենաբարձր դիրքը հորիզոնի նկատմամբ Երևանում լինում է հունիսի 22-ին:
 - 3) Տվյալ պահին միևնույն միջօրեականի բոլոր կետերում գրանցված ժամանակը կոչվում է գոտիական:
 - 4) Տարվա ընթացքում հասարակածի վրա կեսօրին Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ միշտ 90⁰ է:
- 52 Որքա՞ն է հյուսիս-արևելյան կողմի ազիմուտը.
- 1) 135⁰
 - 2) 90⁰
 - 3) 45⁰
 - 4) 225⁰
- 53 Ընտրել ճիշտ պատասխանը.
- 1) Երկրի մակերևութով իր առաջացրած հունով ջրի մշտական հոսքը կոչվում է գետահովիտ:
 - 2) Ցունամիները առաջանում են մշտական քամիների ներգործությամբ:
 - 3) Ստորերկրյա ջրերի բնական ելքը երկրի մակերևույթ կոչվում է աղբյուր:
 - 4) Օվկիանոսի ջրի միջին աղիությունը կազմում է 33 ‰ :
- 54 Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ զուգորդությունը.
- 1) միջերկրածովային կլիմա - 500-600մմ - սավանա
 - 2) ծովային կլիմա - 700-800մմ - տափաստան
 - 3) մուսոնային կլիմա - 200-300մմ - անտառ
 - 4) խիստ ցամաքային կլիմա - 100-200մմ - անապատ
- 55 Կղզին կղզիախմբում առաջինն է իր մեծությամբ, այստեղ է գտնվում երկրի մայրաքաղաքը և աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկը: Այդ կղզին է.
- 1) Կալիմանտան
 - 2) Հոնսյուն
 - 3) Հոկայդոն
 - 4) Շավան
- 56 Ընտրել ճիշտ պատասխանը.
- 1) Եվրասիայի որոշ տեղամասեր մտել են Գոնդվանայի կազմի մեջ:
 - 2) Հարավային Ամերիկայի մեծ մասը մտել է Լավրասիայի կազմի մեջ:
 - 3) Կովկասյան և Ուրալյան լեռներն ընկած են Ալպ-Հիմալայան գետսինկլինալի տարածքում:
 - 4) Ալպերը ձևավորվել է Խաղաղօվկիանոսյան գետսինկլինալի տարածքում:

49 Քարտեզի վրա Բազումի լեռնաշղթան ո՞ր տառով է նշված.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



50 Քարտեզի վրա Կապան քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը

28 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Աշխարհի մեքենաշինական արտադրանքի կեսը թողարկում են զարգացող երկրները:
- 2) Նավթի գլխավոր արտահանող երկիրը Չինաստանն է:
- 3) Քիմիական արդյունաբերությանը յուրահատուկ է ցրված տեղաբաշխումը:
- 4) Թեթև գունավոր մետաղների արտադրությունը էներգատար է:

29 Բնակչության բարձր բնական աճը բնորոշ է.

- 1) Իրանին և Նիգերիային
- 2) Մեծ Բրիտանիային և Գերմանիային
- 3) Ռեյնլանդիային և Թուրքիային
- 4) Ռուսաստանին և Ֆրանսիային

30 Դեպի ծով ելք չունեցող պետություններ են.

- 1) Ալժիրը և Սուդանը
- 2) Շվեյցարիան և Չեխիան
- 3) Ճապոնիան և Մոնղոլիան
- 4) Չիլին և Արգենտինան

31 «Պետություն-նավահանգիստ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Ֆրանսիա – Մարսել
- 2) Ավստրալիա - Տոկիո
- 3) Հնդկաստան – Ռիգա
- 4) Բրազիլիա –Ռոտտերդամ

32 Չինաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ածխի և պողպատի արտադրությամբ աշխարհում առաջինն է:
- 2) Արդյունաբերության գլխավոր կենտրոնները գտնվում են արևմտյան մասում:
- 3) Տարածքի մեծությամբ աշխարհում առաջինն է:
- 4) Ունի ուրբանիզացման բարձր մակարդակ:

33 100 մլն – ից ավել բնակչություն ունեցող երկրներ են.

- 1) Կանադան և Մեքսիկան
- 2) Ճապոնիան և Ինդոնեզիան
- 3) Եգիպտոսը և Գերմանիան
- 4) Բրազիլիան և Արգենտինան

34 Սուրճի մշակությամբ առաջատար երկրներ են.

- 1) Ֆրանսիան և Հունաստանը
- 2) Հնդկաստանը և Իրանը
- 3) Կանադան և Թուրքիան
- 4) Կոլումբիան և Բրազիլիան

35 Գայկական լեռնաշխարհի եզրային ծալքաբեկորավոր լեռնաշղթա չէ.

- 1) Գայկական Պարը
- 2) Փոքր Կովկասը
- 3) Արևելյան Պոնտոսը
- 4) Արևելյան Տավրոսը

36 Տրված «լեռնագագաթ - բարձրություն» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Արագած - 4400մ
- 2) Սիփան - 5165 մ
- 3) Աժդահակ – 3597մ
- 4) Նեմրուք– 2250մ

37 ԳՅ-ում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը (- 46° C) նկատվել է.

- 1) Սևանի ավազանում
- 2) Արագած լեռնագանգվածում
- 3) Ապարանի դաշտում
- 4) Աշոցքի սարահարթում

38 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ԳՅ տարածքի մոտ 82% - ը կազմում են հարթավայրերը:
- 2) Արաքսի ավազանին պատկանող գետերն ունեն սառցադաշտային սնում:
- 3) ԳՅ քաղցրահամ ջրի մեծ մասը կուտակված է Սևանա լճում:
- 4) ԳՅ-ում ամենաշատ տեղումները թափվում են Արարատյան դաշտում:

39 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ԳՅ-ն բնակչության թվով գերազանցում է Ադրբեջանին և Թուրքիային:
- 2) ԳՅ բնակչության կեսից ավելին բնակվում են մինչև 1000մ բարձրություններում:
- 3) ԳՅ բնակչության սեռային կազմում գերակշռում են կանայք:
- 4) ԳՅ-ն ազգային կազմով միատարր երկիր է:

40 Ոսկու հանքավայրեր են.

- 1) Սոթքը և Մեղրաձորը
- 2) Շամլուղը և Կապանը
- 3) Ագարակը և Սվարանցը
- 4) Արթիկը և Քաջարանը

41 ԳՅ ամենախոշոր ջրամբարն է.

- 1) Ախուրյանի
- 2) Ապարանի
- 3) Սպանդարյանի
- 4) Կեչուտի

42 ԳՅ խաղողագործության զարգացման հիմնական շրջանն է.

- 1) Շիրակի դաշտը
- 2) Սևանի ավազանը
- 3) Արարատյան դաշտը
- 4) Լոռվա դաշտը

43 ԳՅ ամենահզոր էլեկտրակայանն է.

- 1) Վանաձորի ջերմաէլեկտրակայանը
- 2) Երևանի ջերմաէլեկտրակայանը
- 3) Գրազդանի ջերմաէլեկտրակայանը
- 4) Տաթևի ջրաէլեկտրակայանը

44 Սպառվող վերականգնվող ռեսուրսներ են.

- 1) երկաթը և մանգանը
- 2) տուֆը և բազալտը
- 3) բույսերը և կենդանիները
- 4) նավթը և քարածուխը

45 Գողային ռեսուրսներով հարուստ երկիր է

- 1) Կանադան
- 2) Եգիպտոսը
- 3) Ճապոնիան
- 4) Գայաստանը

46 Զրերի մաքրման եղանակ չէ.

- 1) ֆիզիկաքիմիական
- 2) երկրաբանական
- 3) մեխանիկական
- 4) կենսաբանական

47 Մթնոլորտը առավելապես աղտոտվում է.

- 1) ջերմաստիճանային շրջադասություններից
- 2) սանիտարական անտառահատումներից
- 3) ջրային էլեկտրակայաններից
- 4) ջերմային էլեկտրակայաններից

48 Քարոլորտի վերին շերտի, մթնոլորտի ստորին շերտի, ամբողջ ջրոլորտի, կենսոլորտի և մարդոլորտի միասնությունը կոչվում է

- 1) բնական զոնա
- 2) մայրցամաք
- 3) աշխարհագրական թաղանթ
- 4) աշխարհագրական գոտի